# Յիշատակարան

Հայկազեան Հայագիտական Հանդէսի 2022 թուականի երկու-գիրքերու խմբագրման եւ հրատարակման միամեայ աշխատանքներուն ընթացքին ականատես եւ ականջալուր եղանք համաշխարհային եւ հայկական քաղաքական իրադարձութիւններու, աննախընթաց դէպքերու:

Արդարեւ, աշխարհը դիմագրաւեց ռուս-ուքրանական պատերազմը, Լիբանան շարունակեց տուայտիլ ընկերատնտեսական եւ քաղաքական ճգնաժամին մէջ: Հայկական առումով, Արցախի հարցի լուծումը մնաց անորոշ եւ Հայաշխարհը ցնցուեցաւ Հայաստանի վրայ ազերիական յարձակումներով ու հայ ռազմագերիներու ճակատագրով:

Սակայն, ի հեճուկս տագնապալի իրադարձութիւններու, արձանագրուեցան նաեւ հպարտառիթ աննախընթաց իրագործումներ ու նուաճումներ ամենատարբեր մարզերու մէջ: Թափով սկսան Հայկական յեռագրերու եւ մինչեւ ԺԹ. դարավերջի ամբողջական հայ մամուլի մասնագիտական թուայնացման աշխատանքները, նշուեցաւ Հայ Աւետարանականութեան 175ամեակը: Գիտութեան քննագաւառին մէջ Արդեմ Փաթափութեան արժանացաւ բժշկութեան նոպէլեան մրցանակի, դէպի տիեզերք արձակուեցաւ հայկական առաջին արբանեակը, Երեւանի մէջ կայացաւ Սթարմուս տիեզերագիտական համաշխարհային գիտաժողովը:

ՀՀՀի խմբագրակազմը շնորհակալութիւն կը յայտնէ Հանդէսի 2022 թուականի լոյս գիրքերու աշխատակիցներուն, ու կը մաղթէ որ հայագիտութեան մշակները շարունակեն իրենց սատարումը հայագիտութեան: